

թուխս կընստի . և ան միջեցին որ  
կըր կըր ոլըրուած պառկած կը կե-  
նայ՝ ինչուան 40 աստիճանի տաքու-  
թիւն կ'ունենայ :

Ուրիշ տեսակ տեսակ օձերու և ա-  
նոնց թոյնին վրայ նորէն առիթ կ'ու-  
նենանք խօսելու :

## Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԵՐԿՐՄԴՈՒԹԻՒՆ

ՈՒՂԲՈՒՆԻ ԵՐԿՐՄԴՈՒԹԻՒՆ :

Ի .

Ո ւ ղ բ ու ց ա ն ի հ ա ր գ է ն վ ր այ :

Հ . Ի՞նչ բան է արտը .

Պ . Արտ կ'ըսուի ան կտոր երկիրը ,  
որուն մէջ ամէն տարի տեսակ մը բյոս  
կը տնկուի ու կը մշակուի : Ուստի  
հասարակ երկրագործները իրենց կա-  
լուածքը իրեք մաս կամ արտ կը բաժ-  
նեն . մէկուն մէջ կը տնկեն ցորեն ,  
մէկալին մէջ դարի կամ ուրիշ արմր-  
տիք մը , իսկ երրորդ մասը պարապ կը  
թողուն :

Հ . Ի՞նչ պատճառաւ երրորդ մասը  
պարապ կը թողուն .

Պ . Երկրագործները կ'ըսեն թէ  
ասով երկիրը կը հանգչի , ու գէշ խո-  
տերը կը խլուին . բայց երբոր հողը  
բաւական պարարտութիւն ունի , ա-  
նոր հանգչիլ պէտք չէ . ուստի ամե-  
նեին պէտք չէ երկիրը պարապ թո-  
ղուլ . շատ շատ՝ տարիներ անցնելէն  
ետքը երբոր կը տեսնես որ հողը սաս-  
տիկ կարծրացեր ու գէշ խոտերով  
լեցուեր է , կրնաս հանգչեցընել : Եր-  
կիրը ձմեռ ատեն պարապ թողուլը  
աւելի աղէկ է , վասն զի եկած ձիւնը  
մէյմը սառելով մէյմը լուծուելով՝  
շատ կը պարարտացընէ զանիկայ : Եր-  
կիր կայ որ իրեք տարին մէյմը պարապ  
կը թողուն . երկիր ալ կայ որ երկու  
տարին մէյմը :

Հ . Այս կերպիս վնասները որո՞նք  
են .

Պ . Անասը յայտնի է . վասն զի  
բոլոր տարին անպտուղ կը մնայ կա-  
լուածքին երրորդ մասը կտմմ կէսը :

Հ . Այս վնասին առաջքը ինչպէս  
կրնայ առնուիլ .

Պ . Ամէն տարի զանազան տեսակ  
բոյսեր տնկելով նոյն արտին հողե-  
րուն ու կլիմային յարմար :

Հ . Ամէն բոյսեր գետնէն նոյնչափ  
հիւթ կը ծծեն .

Պ . Ոէ . անոնց որ հունտը կ'առ-  
նենք , ինչպէս են արմտիքները և իւ-  
ղային բոյսերը ու մնուա արմատ ունե-  
ցողները ( զոր օրինակ գետնախնձորն  
ու ձակնդեղը ) գրեթէ բոլոր իրենց սը-  
նունդը գետնէն կ'առնեն : Խսկ անոնք  
որ խիտ ու հասա տերեւներ ունին՝ ա-  
ւելի օգով կը սնանին . ինչպէս են ըն-  
դեղէններն ու խոտեղէնները , որ ծա-  
զիկ տալէն առաջ կը քաղուին . անոր  
համար գետնի մը վրայ խոտեղէն ցա-  
նելէն ետե արմտիք ցանես նէ՝ շատ  
աղէկ առաջ կուգան :

Հ . Ո՞ի և նոյն երկրին վրայ ամէն  
տարի նոյն բոյսը կրնայ տնկուիլ .

Պ . Ուէ որ հողը շատ պարարտ է՝  
կրնայ ըլլալ . բայց տարի տարուան  
վրայ հողին պարարտութիւնը պակ-  
սելով , բերքն ալ երթալով կը քիւ-  
նայ , և եղած ծախքին չպատախներ :

Հ . Ի՞նչ է պատճառը որ մէկ երկրի  
մը վրայ ետեէ ետե նոյն բոյսը տըն-  
կելու ըլլաս նէ՝ աղէկ առաջ չգար :

Պ . Երեւնայ թէ բոյսերը իրենց  
արմատէն տեսակ մը հիւթ դուրս  
կուտան , որ հողին մէջ մնալով թէ  
որ ետեէն նորէն նոյն տեսակ բյոս  
դնկելու ըլլաս՝ ան հիւթէն կը վնա-  
սուի : Այս բանս փորձով ալ կ'իմա-  
ցուի . վասն զի թէ որ պտղատու ծառ  
մը , օրինակի համար տանձի ծառը ,  
նոյն տեղը տնկելու ըլլաս՝ ուսկից որ  
հանած էր հին տանձի ծառ մը , ան  
նոր տնկած մատղաշ ծառդ ինչպէս որ  
պէտք է չպտղաբերեր :

Հ . Բայսերուն արմատէն դուրս ե-

լած հիւթը ուրիշ տեսակ բոյսերուն  
ալ վնասակար է թէ չէ .

Պ . Ա նասակար չէ . անոր հա-  
մար իմաստուն երկրագործները կը  
խրատեն որ նոյն երկրին վրայ ամէն  
տարի նոր տեսակ բոյսեր տնկուին որ  
մէկմէկու հիւթը ծծեն . բայց աս  
բանիս վրայ դեռ որոշ տեղեկութիւն  
չունինք :

Հ . Ա արուցանի կարգ մը օգտա-  
կար ըլլալու համար ի՞նչ կանոններ  
պէտք են .

Պ . Դ վխաւոր ութը կանոն կայ :

Ա . Ե տեսէ ետև արմտիք ցանել  
նոյն հողին վրայ , հապա մէյմը գետ-  
նէն հիւթ ծծող բոյսեր , մէյմըն ալ  
օդէն ծծողներ :

Բ . Շ ատ անգամ այնպիսի բոյսեր  
ցանելու է որ կարգ կարգ . տնկուած  
ըլլալով՝ դիւրաւ խոտերը , և  
երբեմն թեթև կերպով մըն ալ հեր-  
կուին :

Գ . Ա յ տեսակ բոյսերը ցանելու ա-  
տեն , ինչպա են գետնախնձորը , ձակըն-  
դեղը , և այլն , հողուն մէջ աղք խառ-  
նելու է :

Դ . Ա լքափ կարելի է նոյն երկրին  
վրայ նման տեսակ բոյսեր չտնկուին ,  
հապա գէթ չորս տարին մէյմը :

Ե . Ա րմտիքներէն ետքը ցանելու է  
ընդեղէն կամ խոտեղէն , անոնցմէ  
ետքն ալ կարգ կարգ . տնկուելու բոյ-  
սեր :

Զ . Տ նկուած բոյսերը երկրին բնու-  
թեանը յարմար ըլլան , և այնպէս ցա-  
նուին որ ետքէն ցանելու բոյսիդ-  
ինչ պատրաստութիւն որ պէտք է՝  
անխափան կարենաս ընել :

Է . Ա յնպիսի կարգ մը բռնելու է որ  
կենդանեաց հարկաւոր խոտը չպակ-  
սի , տարուէ տարի խել մը դալար ու  
չոր խոտ ժողվելով :

Ը . Ա զէկ կարգ մը հաստատելու  
համար՝ փորձ ըլլալու է , և նայելու է  
թէ որ տեսակը աւելի շահաւոր է .  
ան բոյսն որ ընդհանրապէս շատ կը  
գործածուի , նայելու է որ անիկայ  
չպակսի , ինչպէս են իւղային , թելա-

բեր , ներկարեր և ալիւրաբեր բոյ-  
սեր :

Ա Խ Ո Ղ Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն :

( Օ վ ու ց տի խմելու վնասները :

( Կ ա յ ու ց ք բ ի շ ի ն ե լ ն ու ց գ ո ր ծ ա ծ ե լ ը  
արեւելք խիստ հին սովորութիւն ե-  
ղած կ'երենայ . բայց Եւրոպայի մէջ  
աւելի ժամանակուն մէջ սկսեր է կ'ը-  
սեն : Հիւսիսային ազգերը սովորա-  
բար մեղրէն , գետնախնձորէն , արմը-  
տիքներէն , և ուրիշ բոյսերէ ու ար-  
մատներէ ու ձակնդեղէ կը հանեն ցր-  
քին : Խակ Եւրոպայիք աւելի խաղո-  
ղէ կը հանեն , որ խիստ առատ ու ազ-  
նիւ կ'ըլլայ , և դիւրաւ կը խմորի :  
Ուում կամ բոյսուածը կը հանեն շա-  
քարի եղէգէն կամ պարզ շաքարէն .  
արեւելցոց արաղ կամ բաժը ըսուածն  
ալ կը շինեն՝ բրինձը խմորելով . խակ  
վարդօղին կը շինուի գինիի ու շաքա-  
րիշարապը իրարու հետքաղադրելով :  
Ունք աս նիւթերուս վրայ երկայն  
խօսիլը բնալցյաներուն ու օղի շինող-  
ներուն թողունք , ու հոս ան միայն  
նայինք՝ թէ ի՞նչ վնասներ ունին ցքին ,  
օղին , և ուրիշ որ և իցէ ոգելից ըմ-  
պելիքները , որ մարդիկ կամ չգիտնա-  
լով և կամբանի տեղ չգնելով՝ մեծա-  
մեծ թշուառութեանց մէջ կ'ինան ,  
և շատ անգամ իրենց կեանքն ալ վր-  
տանգի մէջ կը ձգեն փուձ զուարձու-  
թեան մը համար :

( Կ ա յ ա պ ա տ մարդիկ կան՝ թէ  
գեղացի և թէ քաղաքացի , որ տը-  
ներնուն մէջ և ոչ ձէթ ու աղ ու-  
նին . և սակայն ամէն օր կ'երթան  
քսակնին գինետունները կը պարակն ,  
առանց իրենց ընտանիքը մտածելու  
թէ ի՞նչ խեղձ վիճակի մէջ են : Ուէկը  
հաշիւ ըրեր տեսեր է որ մէկ գեղ մը  
որ 5000 բնակիչ կայ եղեր՝ մէկ տա-  
րուան մէջ ինչուան 80,000 դահնեկանի  
օղի կը խմուի եղեր : Տես թէ մէկ ան-